Մրցույթի Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ հետևյալ առարկաներ դասավանդող մասնագետների թափուր տեղերի համար՝

1. «Տնտեսագիտության հիմունքներ»,
2. «Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ»,
3. «Հաղորդակցություն»,
4. «Հոգեբանություն»,
5. «Մանկավարժություն»,
6. «Դասական պար» (Պարարվեստ մասնագիտության գծով),
7. «Ժողովրդական պար» (Պարարվեստ մասնագիտության գծով),
8. «Ժողբնորոշ պար» (Պարարվեստ մասնագիտության գծով),
9. «Պարարվեստի պատմություն» (Պարարվեստ մասնագիտության գծով):

Որակավորման պահանջներ՝

- Բարձրագույն մասնագիտական կրթություն՝ տվյալ ոլորտում:
- Առնվազն 3 տարվա դասավանդման կամ աշխատանքային փորձ:
- Մանկավարժական ունակություններ, հաղորդակցման և թիմային աշխատանքի հմտություններ:
- Ստեղծագործ մոտեցում, ժամանակակից մեթոդների կիրառում:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը.

- դիմում (Ձև 1),
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
- անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակը և պատճենը),
- ինքնակենսագրություն (Ձև 4),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթերը (դրանց առկայության դեպքում)

Փաստաթղթերի ընդունման ժամկետները.

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրվանից սկսած 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև ***«26» օգոստոս 2025 թվականը ներառյալ:***

- **Երկուշաբթիից-ուրբաթ**՝ ժամը 09:00-16:00
- **Շաբաթ**՝ ժամը 09:00-14:00

Փաստաթղթերի ներկայացման եղանակները.

1. Էլեկտրոնային փոստի միջոցով՝ հետևյալ հասցեին՝ ***info.karamurza@gmail.com***
2. Առձեռն՝ Քոլեջի կադրերի բաժին, հասցե՝ ***ՀՀ, ք. Գյումրի, Ղ. Ղուկասյան 30***

Մրցույթի անցկացման ժամկետը.

Մրցույթը տեղի կունենա ***«29» օգոստոս 2025 թվականին***:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝

- **(0312) 5-13-12**
- **(098) 35-45-93**